

Տիեզերական օբյեկտների կողմից հասցված վնասի համար միջազգային պատասխանատվության մասին

Կոնվենցիա⁴

Սույն Կոնվենցիայի Կողմ հանդիսացող պետությունները,

գիտակցելով տիեզերական տարածության հետազոտմանը և խաղաղ նպատակներով օգտագործմանը նպաստելու հարցում ամբողջ մարդկության ընդհանուր շահը,

վկայակոչելով «Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների հետազոտման և օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով, որ, չնայած տիեզերական օբյեկտները տիեզերք արձակելու գործում ներգրավված պետությունների և միջազգային միջկառավարական կազմակերպությունների կողմից ձեռնարկվելիք նախազգուշական միջոցներին, նման օբյեկտների կողմից կարող է պատահաբար վնաս հասցվել,

գիտակցելով տիեզերական օբյեկտների կողմից վնաս հասցվելու համար պատասխանատվության վերաբերյալ արդյունավետ միջազգային կանոններ և ընթացակարգեր մշակելու և մասնավորապես, սույն Կոնվենցիայի պայմանների համաձայն, նման վնասից տուժածներին անհապաղ ամբողջական և արդարացի փոխհատուցման վճարումն ապահովելու անհրաժեշտությունը,

հավատարմով, որ նման կանոններ և ընթացակարգեր սահմանելը կնպաստի տիեզերական տարածության հետազոտման և խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում միջազգային համագործակցության ամրապնդմանը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված I

Սույն Կոնվենցիայի նպատակներով՝

ա) «վնաս» նշանակում է՝ կյանքի կորուստ, անձնական վնաս կամ առողջության վատթարացում, կամ պետությունների կամ անձանց՝ ֆիզիկական կամ իրավաբանական, կամ միջազգային միջկառավարական կազմակերպությունների սեփականության կորուստը կամ դրան հասցված վնասը,

բ) «արձակում» հասկացությունը ներառում է արձակման փորձը,

գ) «տիեզերք արձակող պետություն» նշանակում է՝

⁴ Ընդունվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 1971 թվականի նոյեմբերի 29-ի 2777 (XXVI):

- i) պետություն, որն արձակում է տիեզերական օբյեկտը կամ ապահովում է դրա արձակումը,
 - ii) պետություն, որի տարածքից կամ կայանից արձակվում է տիեզերական օբյեկտը,
- դ) «տիեզերական օբյեկտ»-ը ներառում է տիեզերական օբյեկտի բաղկացուցիչ մասերը, ինչպես նաև տիեզերք արձակվող ապարատները և դրանց մասերը:

Հոդված II

Տիեզերք արձակող պետությունը բացարձակ պատասխանատվություն է կրում երկրագնդի մակերևույթին կամ թռիչքի վիճակում գտնվող օդանավերին իր տիեզերական օբյեկտի կողմից պատճառված վնասի դիմաց փոխհատուցում վճարելու համար:

Հոդված III

Եթե երկրագնդի մակերևույթից տարբեր այլ վայրում վնաս է հասցվում տիեզերք արձակող պետության տիեզերական օբյեկտին կամ նման տիեզերական օբյեկտում գտնվող անձանց կամ սեփականությանը մեկ այլ՝ տիեզերք արձակող պետության տիեզերական օբյեկտի կողմից, ապա վերջինս պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, երբ վնասը հասցվել է դրա մեղքով կամ այն անձանց մեղքով, որոնց համար ինքը պատասխանատու է:

Հոդված IV

1. Եթե երկրագնդի մակերևույթից տարբեր այլ վայրում վնաս է հասցվում տիեզերք արձակող պետության տիեզերական օբյեկտին կամ նման տիեզերական օբյեկտում գտնվող անձանց կամ սեփականությանը մեկ այլ՝ տիեզերք արձակող պետության տիեզերական օբյեկտի կողմից, և եթե դրանով վնաս է հասցվում երրորդ պետությանը կամ նրա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, ապա առաջին երկու պետությունները համապարտ և բաժնային պատասխանատվություն են կրում երրորդ պետության առջև այն սահմաններում, որը նշված է հետևյալում.

ա) եթե վնասը հասցվել է երրորդ պետությանը երկրագնդի մակերևույթին կամ թռիչքի վիճակում գտնվող օդանավին, ապա դրանք բացարձակ պատասխանատվություն են կրում երրորդ պետության առջև,

բ) եթե վնասը հասցվել է երրորդ պետության տիեզերական օբյեկտին կամ այդ տիեզերական օբյեկտում գտնվող անձանց կամ սեփականությանը երկրագնդի մակերևույթից տարբեր այլ վայրում, ապա նրանք պատասխանատվություն են կրում երրորդ պետության առջև՝ հիմք ընդունելով առաջին երկու պետություններից մեկի մեղքը կամ այն անձանց մեղքը, որոնց համար այն պատասխանատու է:

2. Սույն հոդվածի առաջին պարբերության մեջ նշված՝ համապարտ և բաժնային պատասխանատվության՝ բոլոր դեպքերում վնասի համար փոխհատուցման պարտականությունը բաշխվում է առաջին երկու պետությունների միջև՝ նրանց մեղքի չափի սահմաններում, իսկ եթե այդ պետություններից յուրաքանչյուրի մեղավորության չափը չի կարող որոշվել, ապա փոխհատուցման պարտականությունը նրանց միջև բաշխվում է հավասարապես: Նման բաշխումը չի հակասում երրորդ պետության՝ համապարտ և բաժնային պատասխանատվություն կրող՝ տիեզերք արձակող պետություններից որևէ մեկից կամ բոլորից սույն Կոնվենցիայի համաձայն վճարման ենթակա փոխհատուցումն ամբողջությամբ հայցելու իրավունքին:

Հոդված V

1. Երբ երկու կամ ավելի պետություններ համատեղ են արձակում տիեզերական օբյեկտը, ապա նրանք համապարտ և բաժնային պատասխանատվություն են կրում ցանկացած վնաս հասցնելու համար:

2. Վնասի համար փոխհատուցում վճարած՝ տիեզերք արձակող պետությունն իրավասու է ներկայացնելու պահանջ՝ համատեղ արձակման այլ մասնակիցներին փոխհատուցում տրամադրելու համար: Համատեղ արձակման մասնակիցները կարող են կնքել պայմանագրեր՝ ֆինանսական պարտավորությունն իրենց միջև բաշխելու վերաբերյալ, որի առնչությամբ նրանք կրում են համապարտ և բաժնային պատասխանատվություն: Նման պայմանագրերը չեն հակասում վնաս կրող պետության՝ համապարտ և բաժնային պատասխանատվություն կրող՝ տիեզերք արձակող պետություններից որևէ մեկից կամ բոլորից սույն Կոնվենցիայի համաձայն վճարման ենթակա փոխհատուցումն ամբողջությամբ հայցելու իրավունքին:

3. Այն պետությունը, որի տարածքից կամ հաստատությունից արձակվում է տիեզերական օբյեկտ, համարվում է համատեղ արձակման մասնակից:

Հոդված VI

1. Սույն հոդվածի երկրորդ պարբերության դրույթների համաձայն՝ բացարձակ պատասխանատվությունից ազատելը շնորհվում է այն սահմաններում, որ սահմաններում տիեզերք արձակող պետությունը հաստատում է, որ վնասն ամբողջությամբ կամ մասնակիորեն առաջացել է կոպիտ անզգուշության կամ պահանջ ներկայացրած պետության կամ նրա կողմից ներկայացվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից վնաս հասցնելու մտադրությամբ կատարված գործողության կամ թերացման հետևանքով:

2. Պատասխանատվությունից ազատելը, ինչպիսին էլ այն լինի, չի շնորհվում այն դեպքերում, երբ վնասն առաջացել է տիեզերք արձակող պետության կողմից կատարվող գործողությունների հետևանքով, որոնք չեն համապատասխանում

միջազգային իրավունքին՝ ներառյալ, մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը, ինչպես նաև «Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և մյուս երկնային մարմինների հետազոտման և օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին» պայմանագիրը:

Հոդված VII

Սույն Կոնվենցիայի դրույթները չեն տարածվում այն վնասի վրա, որը տիեզերք արձակող պետության տիեզերական օբյեկտը հասցնում է.

ա) տիեզերք արձակող այդ պետության քաղաքացիներին,

բ) օտարերկրյա քաղաքացիներին՝ այն ժամանակ, երբ նրանք մասնակցում են այդ տիեզերական օբյեկտի գործարկմանը՝ սկսած այն տիեզերք արձակելու պահից, կամ դրանից հետո՝ ցանկացած փուլում, մինչև դրա վայրէջքի պահը, կամ այն ժամանակ, երբ նրանք տիեզերք արձակող այդ պետության հրավերով գտնվում են պլանավորված արձակման կամ վայրէջքի տարածքի անմիջական մոտակայքում:

Հոդված VIII

1. Այն պետությունը, որը վնաս է կրում, կամ որի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք վնաս են կրում, կարող է տիեզերք արձակող պետությանը ներկայացնել նման վնասի փոխհատուցման պահանջ:

2. Եթե քաղաքացիության պատկանելության պետությունը պահանջ չի ներկայացնում, ապա տիեզերք արձակող պետությանը կարող է պահանջ ներկայացնել մեկ այլ պետություն՝ իր տարածքում որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից կրած վնասի առնչությամբ:

3. Եթե ո՛չ քաղաքացիության պատկանելության պետությունը, ո՛չ էլ այն պետությունը, որի տարածքում կրել են վնասը, պահանջ չի ներկայացնում կամ չի տեղեկացնում պահանջ ներկայացնելու իր մտադրության մասին, ապա տիեզերք արձակող պետությանը պահանջ կարող է ներկայացնել մեկ այլ պետություն՝ իր տարածքում մշտական բնակություն ունեցող անձանց կողմից կրած վնասի առնչությամբ:

Հոդված IX

Վնասի փոխհատուցման համար պահանջը տիեզերք արձակող պետությանը ներկայացվում է դիվանագիտական ուղիներով: Եթե պետությունը տիեզերք արձակող տվյալ պետության հետ չի պահպանում դիվանագիտական հարաբերություններ, ապա այն մեկ այլ պետության կարող է խնդրել, որ նա իր պահանջը ներկայացնի տիեզերք

արձակող այդ պետությանը կամ այլ կերպ ներկայացնի իր շահերը սույն Կոնվենցիայի շրջանակներում: Նա կարող է նաև պահանջ ներկայացնել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի միջոցով՝ պայմանով, որ և՛ պահանջ ներկայացնող պետությունը, և՛ տիեզերք արձակող պետությունը լինեն Միավորված ազգերի կազմակերպության անդամներ:

Հոդված X

1. Վնասի փոխհատուցման համար պահանջը կարող է ներկայացվել տիեզերք արձակող պետությանը ոչ ուշ, քան վնասի առաջացման օրվանից կամ պատասխանատվություն կրող՝ տիեզերք արձակող պետությանը հայտնաբերելու օրվանից մեկ տարի հետո:

2. Այնուամենայնիվ, եթե պետությունը տեղյակ չէ վնասի առաջացման մասին կամ չի կարողացել հայտնաբերել պատասխանատվություն կրող՝ տիեզերք արձակող պետությանը, ապա նա կարող է պահանջ ներկայացնել վերոնշյալ փաստերի մասին տեղեկանալու օրվանից մեկ տարի հետո. այնուամենայնիվ, այդ ժամկետը ոչ մի դեպքում չպետք է գերազանցի մեկ տարին՝ հաշված այն օրվանից, երբ տվյալ պետությունը ողջամտության սահմաններում կարող էր տեղեկանալ այդ փաստերի մասին՝ պատշաճ ջանքեր ներդնելու միջոցով:

3. Սույն հոդվածի առաջին և երկրորդ պարբերություններով նախատեսված ժամկետները կիրառվում են նույնիսկ այն դեպքում, երբ վնասի լրիվ չափը հայտնի չէ: Այնուամենայնիվ, այդ դեպքում պահանջ ներկայացնող պետությունն իրավասու է վերանայելու պահանջը և ներկայացնելու հավելյալ փաստաթղթեր նման ժամկետները լրանալուց հետո՝ մինչև վնասի լրիվ չափի մասին հայտնի լինելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Հոդված XI

1. Սույն Կոնվենցիայի շրջանակներում տիեզերք արձակող պետությանը վնասի փոխհատուցման համար պահանջ ներկայացնելը չի պահանջում նախապես սպառել տեղական իրավական պաշտպանության որևէ միջոց, որը կարող է հասանելի լինել պահանջ ներկայացնող պետության կամ նրա կողմից ներկայացվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար:

2. Սույն Կոնվենցիայով ոչինչ չի խոչընդոտում պետությանը կամ նրա կողմից ներկայացվելու հնարավորություն ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պահանջ ներկայացնելու տիեզերք արձակող պետության դատարաններում կամ վարչական տրիբունալներում կամ գերատեսչություններում: Այնուամենայնիվ, պետությունն իրավասու չէ սույն Կոնվենցիայի շրջանակներում պահանջ ներկայացնել այն նույն վնասի առնչությամբ, որի առնչությամբ պահանջ է ներկայացվում տիեզերք արձակող պետության դատարաններում կամ վարչական տրիբունալներում կամ

գերատեսչություններում, կամ՝ մեկ այլ միջազգային համաձայնագրի շրջանակներում, որը պարտադիր է տվյալ պետությունների համար:

Հոդված XII

Այն փոխհատուցումը, որը տիեզերք արձակող պետությունը պարտավորված է վճարել վնասի համար սույն Կոնվենցիայի շրջանակներում, որոշվում է միջազգային իրավունքի, ինչպես նաև արդարադատության և արդարության սկզբունքների համաձայն՝ ապահովելու համար վնասի առնչությամբ այնպիսի փոխհատուցումը, որը կվերականգնի այն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, պետությանը կամ միջազգային կազմակերպությանը, որի անունից պահանջը ներկայացվում է՝ համաձայն այն պայմանի, որը առկա չէր լինի, եթե վնաս չառաջանար:

Հոդված XIII

Եթե պահանջ ներկայացնող պետությունը և այն պետությունը, որի կողմից փոխհատուցումը ենթակա է վճարման սույն Կոնվենցիայի շրջանակներում, համաձայնություն են ձեռք բերում փոխհատուցման այլ ձևի շուրջ, ապա փոխհատուցումը վճարվում է պահանջ ներկայացնող պետության արժույթով կամ այդ պետության պահանջով՝ այն պետության արժույթով, որի կողմից փոխհատուցումը ենթակա է վճարման:

Հոդված XIV

Եթե պահանջը չի լուծվում IX հոդվածով նախատեսված դիվանագիտական բանակցությունների միջոցով, մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ պահանջ ներկայացնող պետությունը տիեզերք արձակող պետությանը տեղեկացնում է իր պահանջը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին, ապա համապատասխան կողմերը կողմերից որևէ մեկի պահանջով ստեղծում են Պահանջների լուծման հարցերով հանձնաժողով:

Հոդված XV

1. Պահանջների լուծման հարցերով հանձնաժողովը կազմվում է երեք անդամից. մեկը նշանակվում է պահանջ ներկայացնող պետության կողմից, մյուսը՝ տիեզերք արձակող պետության, իսկ երրորդը՝ նախագահը, ընտրվում է երկու կողմերի կողմից՝ համատեղ: Յուրաքանչյուր Կողմ կատարում է իր նշանակումը Պահանջների լուծման հարցերով հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ պահանջը ներկայացնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

2. Եթե Հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ պահանջը ներկայացնելուց հետո՝ չորս ամսվա ընթացքում, համաձայնություն ձեռք չի բերվում նախագահ ընտրելու շուրջ, ապա կողմերից մեկը կարող է նախագահ նշանակելու վերաբերյալ պահանջով դիմել Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին լրացուցիչ երկու ամսվա ընթացքում:

Հոդված XVI

1. Եթե կողմերից մեկը սահմանված ժամանակահատվածում չի կատարում իր նշանակումը, ապա նախագահը, մյուս կողմի պահանջով, ձևավորում է մեկ անդամից կազմված՝ Պահանջների լուծման հարցերով հանձնաժողով:

2. Հանձնաժողովում որևէ պատճառով առաջացող թափուր տեղը լրացվում է սկզբնական նշանակման համար ընդունված նույն ընթացակարգով:

3. Հանձնաժողովը սահմանում է իր աշխատակարգը:

4. Հանձնաժողովը սահմանում է այն վայրը կամ վայրերը, որտեղ գտնվում է իր նստավայրը, ինչպես նաև որոշում է մյուս բոլոր վարչական հարցերը:

5. Բացառությամբ մեկ անդամից կազմված Հանձնաժողովի ընդունած որոշումների և վճիռների՝ Հանձնաժողովի բոլոր որոշումները և վճիռները կայացվում են ձայների մեծամասնությամբ:

Հոդված XVII

Պահանջների լուծման հարցերով հանձնաժողովի կազմում անդամների ավելացում չի կարող կատարվել այն հիմքով, որ Հանձնաժողովի մեկ վարույթում միանում են երկու կամ ավել՝ պահանջ ներկայացնող պետություն կամ տիեզերք արձակող պետություն: Այդ կերպով միացված՝ պահանջ ներկայացնող պետությունները կոլեկտիվ հիմունքներով Հանձնաժողովի մեկ անդամի նշանակում են նույն եղանակով և այն նույն պայմաններով, որոնք կգործեին պահանջ ներկայացնող մեկ պետության դեպքում: Եթե տիեզերք արձակող երկու կամ ավել պետություններ այդ կերպով են միանում, ապա նրանք կոլեկտիվ հիմունքներով և նույն եղանակով նշանակում են Հանձնաժողովի մեկ անդամին: Եթե պահանջ ներկայացնող կամ տիեզերք արձակող պետությունները սահմանված ժամկետում նշանակում չեն կատարում, ապա նախագահը ձևավորում է մեկ անդամից կազմված Հանձնաժողով:

Հոդված XVIII

Պահանջների լուծման հարցերով հանձնաժողովը փոխհատուցման նպատակով պահանջը լուծում է ըստ էության և, առկայության դեպքում, սահմանում վճարվելիք փոխհատուցման չափը:

Հոդված XIX

1. Պահանջների լուծման հարցերով հանձնաժողովը գործում է XII հոդվածի դրույթների համաձայն:

2. Հանձնաժողովի որոշումը վերջնական է և կատարման համար պարտադիր, եթե կողմերն այդպես են համաձայնել. հակառակ դեպքում Հանձնաժողովը կայացնում է վերջնական և խորհրդատվական բնույթի վճիռ, որը կողմերը քննարկում են բարեխղճորեն: Հանձնաժողովը նշում է որոշումը կամ վճիռը կայացնելու հիմքերը:

3. Հանձնաժողովն իր որոշումը կամ վճիռը կայացնում է հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան դրա ստեղծման ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում, եթե Հանձնաժողովն այդ ժամկետի երկարաձգումն անհրաժեշտ չի համարում:

4. Հանձնաժողովը հրապարակում է իր որոշումը կամ վճիռը: Նա յուրաքանչյուր կողմի և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին ուղարկում է իր որոշման կամ վճռի հաստատված պատճենը:

Հոդված XX

Պահանջների լուծման հարցերով հանձնաժողովի հետ կապված ծախսերը հավասարապես կրում են կողմերը, եթե այլ բան որոշված չէ Հանձնաժողովի կողմից:

Հոդված XXI

Եթե տիեզերական օբյեկտի պատճառած վնասը մեծ վտանգ է ներկայացնում մարդու կյանքի համար կամ լրջորեն միջամտում է բնակչության կենսապայմաններին կամ կենսական կենտրոնների գործունեությանը, ապա Կողմ պետությունները և, մասնավորապես, տիեզերք արձակող պետությունը դիտարկում են վնաս կրած պետությանը պատշաճ և անհապաղ աջակցություն ցուցաբերելու հնարավորությունը նման պահանջով վերջինիս դիմելու դեպքում: Այնուամենայնիվ, սույն հոդվածում ոչինչ չի ազդում սույն Կոնվենցիայով նախատեսված՝ Կողմ պետությունների իրավունքների կամ պարտականությունների վրա:

Հոդված XXII

1. Սույն Կոնվենցիայում, բացառությամբ XXIV-XXVII հոդվածների, պետություններին կատարված հղումները կիրառվում են ցանկացած միջազգային միջկառավարական կազմակերպության նկատմամբ, որը տիեզերական գործունեություն է իրականացնում, եթե այդ կազմակերպությունը հայտարարում է սույն Կոնվենցիայով նախատեսված իրավունքները և պարտականություններն իր կողմից ճանաչվելու մասին, և եթե այդ կազմակերպության անդամ պետությունների մեծ մասը սույն Կոնվենցիայի և «Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և մյուս երկնային մարմինների հետազոտման և օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին» պայմանագրի Կողմ պետություններ են:

2. Այդպիսի ցանկացած կազմակերպության անդամ պետությունները, որոնք սույն Կոնվենցիայի Կողմ պետություններ են, ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ապահովելու համար կազմակերպության կողմից հայտարարություն կատարվելը՝ նախորդ պարբերության համաձայն:

3. Եթե միջազգային միջկառավարական կազմակերպությունը սույն Կոնվենցիայի դրույթների ուժով պատասխանատվություն է կրում հասցված վնասի համար, ապա այդ կազմակերպությունը և որա անդամները, որոնք սույն Կոնվենցիայի Կողմ պետություններ են, կրում են համապարտ և բաժնային պատասխանատվություն՝ պայմանով, որ.

ա) նման վնասի առնչությամբ փոխհատուցման համար ներկայացվող ցանկացած պահանջ առաջին հերթին ներկայացվի կազմակերպությանը,

բ) միայն այն դեպքում, երբ կազմակերպությունը վեց ամսվա ընթացքում չի վճարում նման վնասի համար որպես փոխհատուցում վճարվելիք որևէ համաձայնեցված կամ սահմանված գումար, պահանջ ներկայացնող պետությունը վկայակոչի այդ գումարի վճարման համար անդամների՝ սույն Կոնվենցիայի Կողմ պետությունների պատասխանատվությունը:

4. Սույն հոդվածի առաջին պարբերության համաձայն հայտարարություն կատարած կազմակերպությանը պատճառած վնասի փոխհատուցման համար ցանկացած պահանջ, սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն, ներկայացվում է կազմակերպության այն անդամ պետության կողմից, որը սույն Կոնվենցիայի Կողմ պետություն է:

Հոդված XXIII

1. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն ազդում գործող միջազգային այլ համաձայնագրերի վրա այնքանով, որքանով առնչվում են նման համաձայնագրերին Կողմ պետությունների միջև հարաբերություններին:

2. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ պետություններին չի խոչընդոտում կնքել դրա դրույթները վերահաստատող, լրացնող կամ գործողության ժամկետը երկարաձգող միջազգային համաձայնագրեր:

Հոդված XXIV

1. Սույն Կոնվենցիան բաց է բոլոր պետությունների ստորագրման համար: Ցանկացած պետություն, որը սույն Կոնվենցիան չի ստորագրում մինչ ուժի մեջ մտնելը՝ սույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն, կարող է ցանկացած ժամանակ միանալ Կոնվենցիային:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման ստորագրող պետությունների կողմից: Վավերացման և միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարություններին, որոնք սույնով նշանակվում են որպես ավանդապահ կառավարություններ:

3. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման մասին հինգերորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու պահին:

4. Այն պետությունների համար, որոնց վավերացման կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում նրանց կողմից վավերացման կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու ամսաթվից:

5. Ավանդապահ կառավարությունները Կոնվենցիան ստորագրող կամ նրան միացող բոլոր պետություններին անհապաղ տեղեկացնում են յուրաքանչյուր ստորագրման օրվա, Կոնվենցիայի վավերացման և դրան միանալու մասին յուրաքանչյուր փաստաթուղթ ի պահ հանձնելու ամսաթվի, Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամսաթվի և այլ ծանուցումների մասին:

6. Սույն Կոնվենցիան գրանցվում է ավանդապահ կառավարությունների կողմից՝ ՄԱԿ-ի կանոնադրության 102-րդ հոդվածի համաձայն:

Հոդված XXV

Սույն Կոնվենցիային Կողմ ցանկացած պետություն կարող է առաջարկել փոփոխություններ կատարել սույն Կոնվենցիայում: Կոնվենցիայի Կողմ՝ փոփոխություններն ընդունող յուրաքանչյուր պետության համար փոփոխություններն ուժի մեջ են մտնում Կոնվենցիայի Կողմ պետությունների մեծ մասի կողմից դրանք ընդունվելուց հետո, իսկ դրանից հետո՝ Կոնվենցիայի Կողմ մյուս պետություններից յուրաքանչյուր համար՝ այն ընդունելու ամսաթվին:

Հոդված XXVI

Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց տասը տարի հետո դրա վերանայման հարցը կներառվի Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի նախնական օրակարգում՝ որոշելու համար, թե Կոնվենցիայի նախկին կիրառման լույսի ներքո արդյոք այն վերանայման կարիք ունի: Այնուամենայնիվ, Կոնվենցիան հինգ տարի շարունակ ուժի մեջ մնալուց հետո՝ ցանկացած ժամանակ, Կոնվենցիայի Կողմ պետությունների մեկ երրորդի պահանջով և Կողմ պետությունների մեծ մասի համաձայնությամբ հրավիրվում է Կողմ պետությունների համաժողով՝ սույն Կոնվենցիան վերանայելու համար:

Հոդված XXVII

Կոնվենցիայի Կողմ ցանկացած պետություն կարող է ծանուցել Կոնվենցիայից դուրս գալու մասին այն ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո՝ գրավոր ծանուցելով ավանդապահ կառավարություններին: Կոնվենցիայից դուրս գալը իրավական ուժ է ստանում այդ ծանուցումն ստանալու ամսաթվից մեկ տարի հետո:

Հոդված XXVIII

Սույն Կոնվենցիան, որի անգլերենով, ռուսերենով, ֆրանսերենով, իսպաներենով և չինարենով տեքստերը հավասարապես նույնական են, ի պահ է հանձնվում ավանդապահ կառավարությունների արխիվներ: Ավանդապահ կառավարությունները սույն Կոնվենցիայի՝ պատշաճ կերպով հաստատված պատճենները փոխանցում են Կոնվենցիան ստորագրող կամ դրան միացող պետությունների կառավարություններին:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

ԿԱՏԱՐՎԱԾ է երեք օրինակից Լոնդոն, Մոսկվա և Վաշինգտոն քաղաքներում հազար ինը հարյուր յոթանասուններկու թվականի մարտի քսանինին: